ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար <<ԱՄԱՀ-ԲՄԽԾՁԲ-25/80 > ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ <<21>> օգոստոսի 2025թ.ժ.10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Արսեն Եփրեմյան - աշխատակազմի կոմունալ տնտեսության, գույքի կառավարման, տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար ,

Անդամներ

Արամ Ավետիսյան-*աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ*

Կարեն Կարապետյան - աշխատակազմի կոմունալ տնտեսության, գույքի կառավարման, տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Քաջիկ Վարդանյան - աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար

Փայլակ Հակոբյան – աշխատակազմի գնումների բաժնի պետ

1. Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին
2. Տեղեկություններ հայտերի գնահատման մասին

1. Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին

1.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017թվականի թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

2. Տեղեկատվություն հայտերի գնահատման մասին

Էտալոն Գրուպ ՍՊԸ, Բուլգարո ՍՊԸ ՀՁ -ի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը , փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին , բացառությամբ՝

- հայտում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիայի ներդիրը (1, Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ , .էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ))
- բացակայում է հայտով հավելված 1.1-ով ներկայացված Տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերը և վարձակալության պայմանագրերը:
- հայտով ներկայացված հավելված 1 դիմում հայտարարությանում բացակայում է Էտալոն Գրուպ ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:
- բացակայում է հրավերով <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշով պահանջվող մասնագետների ՝ (Բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ տեխնիկական հսկիչ, Էլեկտրաէներգետիկ ճարտարագետ տեխնիկական հսկիչ, Որակավորված գեոդեզիստ) մասնագետի (մասնագետների) հաստատած գրավոր համաձայնությունները /ներկայացված համաձայնագրերում հստակ նշելով աշխատակցի մասնակցությունը տվյալ չափաբաժնին/՝ մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթի՝ << քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրվող հավաստագրի պատճենները:
- բացակայում է հրավերով <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշով պահանջվող՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ գնման գնի հիսուն տոկոսից , նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում հանձման-ընդունման արձանագրության, հաշիվ-ապրանքագրի պատճենը կամ ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը և Արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նախկինում կատարված պայմանագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 41-րդ կետը և հիմք ընդունելով հրավերի 8.9-կետը գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և մասնակցին ծանուցել հայտով ներկայացված հրավերի պահանջներին նկատմամբ անհամապատասխանությունների մասին:

2. ԱՄԱՀ-ԲՄԽԾՁԲ-25/80 ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստ հրավիրել 2025 թվականի օգոստոսի 25-ին ժամը 10.00-ին

Գնահատող հանձնաժողովի նախագահ ---------- Արսեն Եփրեմյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ ---------- Արամ Ավետիսյան

---------- Քաջիկ Վարդանյան

---------- Կարեն Կարապետյան

Գնահատող հանձնաժողոի քարտուղար ---------- Փայլակ Հակոբյան